## Ծանուցում

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Ամսաթիվ. 10 մարտի, 2014

Ուղղված է. Բարձրագույն Իշխանություններին, Տարածքային Յոթանասունականներին, Ցցերի, Միսիաների և Շրջանների Նախագահներին, Եպիսկոպոսներին և Ճյուղերի Նախագահներին

Ում կողմից. Միսիոներական բաժանմունք (801-240-2222)

Թեմա. Պալարախտի զննում վերադարձող միսիոներների համար

---

Պալարախտը լուրջ բակտերիալ վարակ է, որը կարող է շարքից հանել թոքերը և այլ կենսական օրգաններ: Չափազանց կարևոր է, որ բոլոր վերադարձող միսիոներները զննում անցնեն պալարախտի ախտորոշման համար, քանի որ նրանք կարող էին վարակված լինել այդ հիվանդությամբ, առանց տեսանելի անմիջական ախտանիշների:

Կից ուղարկվում է մի նամակ, որը միսիայի նախագահները պետք է տան վերադարձող միսիոներներին, հրահանգելով նրանց պալարախտի զննում անցնել տուն վերադառնալուց անմիջապես հետո: Այս նամակի էլեկտրոնային տարբերակը միսիայի նախագահը կարող է ներբեռնել Միսիայի Նախագահի Պորտալից (missionary.lds.org/presidents) կամ միսիայի աշխատակազմը կարող է ներբեռնել Միսիոներների Բժշկական վեբկայքից (missionarymedical.org):

Մենք խնդրում ենք տեղական քահանայության ղեկավարներին խրախուսել վերադարձող միսիոներներին տուն վերադառնալուց հետո զննում անցնել պալարախտի ախտորոշման համար և հավաստիանալ, որ նրանք բավարար միջոցներ ունեն զննումն անցնելու համար:

Հարգելի Երեց/Քույր _____

Առարկա. Պալարախտի զննում

Պալարախտը լուրջ բակտերիալ վարակ է, որը կարող է շարքից հանել թոքերը և այլ կենսական օրգաններ: Այն տարածված վարակ է. Աշխարհի բնակչության մեկ-երրորդը կրում է այդ վարակը: Վարակված անձինք, որոնք հաճախ հազում են, տարածում են վարակը, փոխանցելով այն ուրիշներին:

Մարդկանց մեծ մասը վարակվում է պալարախտով առանց արագ ի հայտ եկող ախտանիշների: Դա կոչվում է *լատենտ կամ թաքնված պալարախտ:* Թաքնված պալարախտով անձինք հետագայում հիվանդանալու 10 տոկոս հավանականություն կա:

Որպեսզի ձեզ մոտ չզարգանան լուրջ ախտանիշներ պալարախտի հնարավոր վարակի հետևանքով, *չափազանց կարևոր է*, որ դուք զննում անցնեք տուն վերադառնալուց անմիջապես հետո: Անկախ միսիայից առաջ անցկացված պալարախտի զննման արդյունքներից (դրական, թե բացասական), դուք, միևնույն է, տուն վերադառնալուց հետո պետք է հանդիպեք բժշկի հետ կամ այցելեք ձեր բժշկական հաստատությունը՝ կրկին զննում անցնելու համար: Հնարավոր է, պահանջվի լրացուցիչ զննում կամ բուժում:

Եթե ձեզ մոտ ախտորոշել են թաքնված պալարախտ, դուք պետք է հետևեք ձեր բժշկի կամ տեղական բժշկական բաժանմունքի խորհուրդներին՝ համաձայն ձեր երկրի առողջության քաղաքականությանը: Շնորհակալություն ձեր առողջության մասին հոգ տանելու համար, ինչը կօգնի ձեզ մնալ Տիրոջ ուժեղ և առողջ ծառա ձեր ողջ կյանքի ընթացքում:

Հարգանքներով՝

_____

Միսիայի նախագահ